



Մեր գնահատականներն ու քայլերը լինելուն են պարզ, տեսանելի եւ հրապարակային



Օրերս լրագրողների հետ հանդիպել են ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը և ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը: Պատասխանելով լրագրողների հարցերին՝ պաշտոնյաները ներկայացրել են «խոսրովի անտառ» պետական արգելոցում բռնկված հրդեհի մարման աշխատանքները, խոսել կրած վնասների, նախատեսվող անելիքների մասին: Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը նշել է, որ օգոստոսի 12-ից բռնկված հրդեհներին արձագանքը եղել է շատ արագ և պատասխանատու: Նախնական տվյալների համաձայն՝ արգելոցի տարածքում այրվել է 1600 հա, որից անտառածածկ տարածքը կազմել է շուրջ 250 հա: Խոշոր կաթնասունների մասով արձանագրված կորուստ չկա, բուսականության մասով ամբողջական գնահատական կտրվի հաջորդ տարի: Արծվիկ Մինասյանը հավաս-

տիացրել է, որ վնասի վերաբերյալ նախարարությունը թաքցնելու ոչինչ չունի: «Մենք մի քանի աղբյուրներ ենք համադրելու, որպեսզի ունենանք առավելագույն ճշգրիտ պատկեր: Այն ինչ այս պահին ներկայացվեց անտառի մոնիտորինգի նախնական տվյալներն են: Ուզում են մակտահեցնել ձեզ, որ չի լինելու որևէ բան, որ մտածեք, թե ինչ որ բան թաքցնում ենք: Ոչ, այդպիսի խնդիր չկա, ավելին, մենք ուզում ենք ավելի պարզ, տեսանելի, հասկանալի և հրապարակային գնահատականներ հնչեցնենք այս մասով, որպեսզի հետագայում վերականգնողական աշխատանքները լինեն ավելի նպատակային և ողջ հասարակության ներգրավմամբ», - ասել է նախարարը՝ նշելով, որ կա հարուցված քրեական գործ և սպասում են իրավապահների գնահատականին: «Խոսրովի անտառ» պետական արգելոցում հեռահաղորդակցության ցանցի բացակայության վերաբերյալ հարցին ի պատասխան՝ Դավիթ Տոնոյանը հայտնել է, որ ՀՀ Նախագահի և վարչապետի հանձնարարությամբ բնապահպանության նախարարը մեկ անգամ արդեն խոսել է բջջային կապի օպերատորների հետ, որոնք առաջարկում են լուծումներ և մոտ ժամանակներում հնարավոր է կապն ապահովվի: Արծվիկ Մինասյանը տեղեկացրել է բանակցությունների մասին՝ հույս հայտնելով, որ առաջիկա 20 օրվա ընթացքում խնդիրը կլուծվի: Նախարարությունը ցանկանում է արգելոցում Wi-Fi սարքավորումներ տեղադրել, որը կօգնի մակտահեցնելու մոնիտորինգային աշխատանքներին, որսագողության դեմ պայքարին: Պատասխանելով արգելոցում ծառատնկման հնարավորության վերաբերյալ հարցին, բնապահպանության նախարարը կրկին նշել է, որ արգելոցային ռեժիմն այսօրվա գործող օրենքով թույլ չի տալիս որևէ միջամտություն, որևէ գործունեություն, անգամ բույսերի արհեստական աճեցում, ևս մեկ անգամ հայտարարելով, որ արգելոցի կարգավիճակը չի փոխվելու:



Հրդեհի հնարավոր օջախները բացահայտելը եւ չեզոքացնելը օրվա հրամայական



« Խոսրովի անտառ» պետական արգելոցում բռնկված հրդեհի հետմարման աշխատանքները շարունակվում են մեծ ինտենսիվությամբ: Արգելոցի տարածքում օրենքով սահմանված՝ մարդկային որևէ միջամտության բացառման պատճառով տեղում կուտակված բուսականության մնացորդները տասնամյակների ընթացքում ձևավորել են հունուսի հաստ շերտ, որը հրդեհի շիջումից հետո էլ դեռ թաքնված այրվում է: Հրդեհից վնասված որոշ հատվածներ պարբերաբար ծխում են և համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում կարող են նոր օջախների վերածվել: Արգելոցի աշխատակիցները, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ փրկարանները՝ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների համակարգմամբ իրականացնում են շուրջօրյա հերթապահություններ, հետախուզումներ, որոնք ընթացքում յուրաքանչյուր օր հայտնաբերվում և չեզոքացվում է միջինը մոտ 100 ծխացող՝ հրդեհի բռնկման պոտենցիալ օջախ: Հետմարման աշխատանքներին մասնակցում են նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնագետները և աշխատակիցները: Աշխատանքներին ներգրավված է զգալի մարդկային ռեսուրս և հատուկ

տեխնիկա: Նշված աշխատանքների համար առաջին անգամ օգտագործվում է նաև ՀՀ ԱԻ նախարարության հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի նորագույն տեխնիկան: Բարձր հրդեհավտանգությանը նպաստում են հանրապետությունում գերակայող բարձր ջերմային ֆոնը և ոչ անձրևային եղանակը: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տնօրեն Հրաչյա Յովակիմյանը, ներկայացնելով հրդեհի հետմարման աշխատանքների ողջ ծավալը, առանձնացրել է բնական, հատկապես ռելիեֆային առանձնահատկությունները, որոնք բարդացնում են բռնկված հրդեհի վերջնական մարման աշխատանքները: Արգելոցի տնօրենը շնորհակալություն է հայտնել բոլոր կազմակերպություններին և քաղաքացիներին, ովքեր սրտացավորեն մասնակցել են և շարունակում են պայքարել հրդեհի հնարավոր բռնկումների դեմ: Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետ Հովհաննես Եմիշյանը հայտնել է, որ կան ծխացող բազմաթիվ օջախներ, որոնք փրկարարների դիտակետերից հետախուզման միջոցով հայտնաբերվում են ու մարվում:

• Զրդեհի հնարավոր օջախները բացահայտելը եւ չեզոքացնելը օրվա հրամայական

Սկիզբը էջ 2 /

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության Բնության հատուկ պահպանվող տարածքների և դենդրոպարկերի կառավարման բաժնի պետ Արամ Աղասյանը, ներկայացնելով ուսումնասիրությունների նախնական տվյալները, նշել է, որ հրդեհն ընդգրկել էր արգելոցի մոտ 1600 հեկտար տարածքը, սակայն հրդեհված տարածքներում առկա են չվնասված կղզյակներ, որոնք կենդանիների համար ապաստարան են դարձել, ինչը հետագայում կնպաստի անտառային էկոհամակարգի վերականգնմանը:

Խոշոր կենդանիների կորուստներ չեն արձանագրվել, կորուստներ կարող են լինել որոշ սողունների և անողնաշարավոր կենդանիների մոտ: Ըստ Ա. Աղասյանի՝ չնայած ընթացում են վնասի չափերի գնահատման աշխատանքներ, սակայն այն լիարժեք հնարավոր կլինի ներկայացնել հաջորդ տարվա գարնանը՝ ծառերի վիճակը գնահատելուց հետո, քանի որ խոտածածկ տարածքում հրդեհի արագ տարածման հերտևանքով շատ ծառերի բներ չեն հասցրել վնասվել: «Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացվող աշխատանքներին մշտապես հետևում են ՀՀ բնապահպանության և արտակարգ իրավիճակների նախարարները:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցին հարող որսահանդակներում որսը խստիվ արգելվել է



«Խոսրովի անտառ» պետական արգելոցում բռնկված հրդեհի պատճառով վայրի որոշ կենդանիներ և թռչուններ տեղափոխվել են հարակից անվտանգ շրջաններ: ՀՀ բնապահպանության նախարարությունն օրեր առաջ կոչով դիմել էր հանրապետության բնակչությանը՝ ցուցաբերել զգոնություն, զգուշություն ու նաև հորդորել էր չվնասել աղետի պատճառով անվտանգ վայրեր ու թաքստոցներ փնտրող կենդանիներին: Նախարարությունը նաև դիմել էր որսորդներին՝ օգոստոսի 26-ից սկսվող սիրողական որսաշրջանի ժամանակ գերծմնալ արգելոցի մերձակա բարձրադիր գոտիներում որս իրականացնելուց: Այնուհետև նախարարությունում կայացել է խորհրդակցություն, որին մասնակցել են նաև որսմիությունների ղեկավարները: Քննարկման արդյունքում

համաձայնություն էր ձեռք բերվել համապատասխան փոփոխություն կատարել ՀՀ բնապահպանության նախարարի՝ Հայաստանի որսահանդակներում որսի կենդանիների 2017-2018 թվականների սիրողական որսի համար թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները սահմանելու մասին սույն թվականի օգոստոսի 1-ին ստորագրված հրամանում: Հրամանի փոփոխությունն արդեն կատարված է, համաձայն որի՝ որս չի թույլատրվում ՀՀ Արարատի մարզի հյուսիս-արևելյան որսահանդակում, որը գտնվում է ՀՀ Կոտայքի, Գեղարքունիքի և մասամբ Վայոց ձորի մարզերի հետ սահմանագծով անցնող Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջին տեղակայված բարձր լեռնային գոտու տարածքներում՝ Լանջազատ, Ն.Դվին, Վ.Դվին, Նորաշեն, Նարեկ, Քաղցրաշեն, Ջանգակատում, Ուրցածոր համայնքների վարչական սահմաններում, ՀՀ Արարատի մարզի կենտրոնական - հյուսիսային որսահանդակում, որը գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցին հարող Երանոսի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջին տեղակայված նախալեռնային գոտու տարածքներում՝ Գետազատ, Լանջազատ, Ն.Դվին, Վ.Դվին, Նորաշեն, Նարեկ, Քաղցրաշեն, Ուրցածոր, Այգեգարդ, Դաշտաքար, Գինեվետ համայնքների վարչական սահմաններում և ՀՀ Վայոց ձորի Վայք որսահանդակում, որը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի հետ սահմանագծով անցնող Ջանգեզուր լեռնաշղթայի արևմտյան լանջերում՝ սկսած Կորդաբակ լեռան լանջերից մինչև Ամուլսարի ստորոտները՝ Սարավան, Արտավան, Գոմք, Մարտիրոս, Սերս, Բարձրունի, Ջառիթափ համայնքների վարչական սահմաններում:



Պարզեցատրվել են «ԻԼ-76» հատուկ նշանակության ինքնաթիռի անձնակազմի անդամները

«Քննապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը պարզեցատրվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հրդեհաշիջման աշխատանքներին մասնակից ՌԴ ԱԻՆ հատուկ նշանակության «ԻԼ-76» ինքնաթիռի անձնակազմին: Արծվիկ Մինասյանը շնորհակալություն է հայտնել ինքնաթիռի անձնակազմի բոլոր անդամներին սրտացավ վերաբերմունքի և պատասխա-

նատվությամբ իրականացրած աշխատանքի համար: Նախարարի հրամանով՝ ՀՀ ԲՆ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի ՊՈԱԿ-ի տարածքում բռնկված հրդեհի շիջման աշխատանքներում բացառիկ ծառայություն մատուցելու և ցուցաբերած բարձր պրոֆեսիոնալիզմի համար «ԻԼ-76» հատուկ նշանակության ինքնաթիռի հրամանատար Եվգենի Սերիխին շնորհվել է ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության բնագավառում նշանակալի ավանդի համար» գերատեսչական ոսկ» մեդալ: Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցած «ԻԼ-76» հատուկ նշանակության ինքնաթիռի անձնակազմի բոլոր անդամները պարգևատրվել են նախարարության շնորհակալագրերով և անհատույց ու ցմահ ՀՀ ԲՆ բնության հատուկ պահպանվող տարածքներ այցելելու վկայականով: «ԻԼ-76» հատուկ նշանակության ինքնաթիռի անձնակազմին գերատեսչական մեդալներով պարգևատրել է նաև ԱԻՆ նախարար Դավիթ Տոնոյանը:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի տնօրինության հայտարարությունը



«Բոլորիս է հայտնի այս օրերին «Խոսրովի անտառ» պետական արգելոցը պատուհասած աղետալի հրդեհի մասին: Լրատվությունը, սոցիալական ցանցերում քննարկումներն ու արձագանքները չեն դադարում: Բոլորը անհանգստացած են, մտահոգ, այս օրերին բոլորը ցանկանում էին ինչ-որ կերպ օգնած լինել մեզ ամենակուլ հրդեհի դեմն առնելու համար: Օգոստոսի 12-ին բռնկված հրդեհը վնասներ հասցրեց դարերի պատմություն ունեցող, տարածաշրջանում իր տեսակի մեջ միակը հանդիսացող մեր արգելոցին: Աղետալի հրդեհի դեմ պայքարելիս մենք մենակ չենք եղել: Մեր կողքին էին բազմաթիվ մարդիկ, ովքեր սրտացավ ու մտահոգ էին կրակի ծիրաններում գտնվող մեր արգելոցի համար ու փորձում էին առա-

վելագույնն անել հրդեհը մարելու գործում: Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ քաղաքացիներին, ովքեր առաջին իսկ օրերից մեր կողքին են եղել՝ գիտակցելով, որ «Խոսրովի անտառ» արգելոցը բոլորիս հարստությունն է: «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի ողջ աշխատակազմի անունից հատուկ շնորհակալություն ենք հայտնում:
ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ հարգարժան նախարար Դավիթ Տոնոյանի գլխավորությամբ, որն այս ամբողջ ընթացքում իր աշխատակիցների հետ եղել է արգելոցի տարածքում, անձամբ կազմակերպել, ղեկավարել ու մասնակցել է հրդեհաշիջման աշխատանքներին:
ՀՀ Բնապահպանության նախարարությանը և ՊՈԱԿ-ների աշխատակիցներին՝ նախարար Արծվիկ Մինասյանի գլխավորությամբ, այս ծանր օրերին անընդհատ մեր կողքին լինելու համար:

«Խոսրովի անտառ» ղեկավարության արգելոցի հայտարարությունը

Սկիզբը՝ էջ 41

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության մոնիտորինգի կենտրոնի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատակիցներին: Արարատի մարզպետարանի աշխատակիցներին՝ մարզպետ Արամայիս Գրիգորյանի գլխավորությամբ, որոնք նույնպես մեր կողքին են եղել այս օրերի ընթացքում:

ՀՀ Արարատի մարզի ոստիկանության վարչությանը՝ հանձին Սևան Քոչարյանի, որն իր աշխատակիցների հետ մասնակցում էր հրդեհաշիջման գործողություններին:

ՀՀ ՊՆ Արարատի ու Վայոց Ձորի զորամասերի սպայական ու զինվորական անձնակազմերին իրենց անձնուրաց աշխատանքի համար:

WWF հայաստանյան գրասենյակի տնօրեն Կարեն Մանվելյանին և նրա աշխատակիցներին, ցուցաբերած տեխնիկական աջակցության համար:

Կովկասի բնության հիմնադրամի ազգային համակարգող Արման Վերմիշյանին, ցուցաբերած տեխնիկական աջակցության համար:

GIZ հայաստանյան գրասենյակին՝ ի դեմս խորհրդական Արմեն Գևորգյանի, տեխնիկական աջակցության համար:

UNDP բնապահպանական ծրագրերի ղեկավար Արմեն

Մարտիրոսյանին՝ ցուցաբերած աջակցության համար:

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամին՝ ի դեմս Ռոբերտ Խաչատրյանի:

Շնորհակալ ենք շրջակա համայնքների բնակչությանը, որոնք սրտացավորեն ջանք ու եռանդ չեն խնայել մեզ օգնելու համար: Շնորհակալ ենք նաև ՌԴ-ում մեր որոշ հայրենակիցներին, որոնք, չկարողանալով անձամբ լինել մեր կողքին, աջակցություն են առաջարկել և մեծ ցավ են ապրում կատարվածի համար: Շնորհակալություն ենք հայտնում նաև այն լրատվամիջոցներին, որոնց անկողմնակալ լուսաբանման շնորհիվ ձևավորվեց հատուկ վերաբերմունք մեր գիտակից քաղաքացիների մոտ, ովքեր իրենց աջակցությունն ու օգնությունն էին առաջարկում արգելոցի դժվար ժամանակաշրջանում: Բոլորիս համատեղ ջանքերի շնորհիվ հրդեհի տարածման վտանգը այս պահին չէզոքացվել է և շարունակվում են հետիդեհային աշխատանքները: Ճիշտ է՝ մեր ունեցած կորուստները անգնահատելի են, բայց մենք հույս ունենք, որ շատ կարճ ժամկետներում կվերականգնվի մեր կորուստների որոշ մասը, և մենք սրտացավորեն ու ավելի ուշիմ կերպով կշարունակենք պահպանել մեր արգելոցի հարստությունը:

«Խոսրովի անտառ»
պետական արգելոց» ՊՈԱԿ



«Խոսրովի անտառ» պետական արգելոցին օժանդակելու նպատակով բացվել են հատուկ հաշվեհամարներ

«Խոսրովի անտառ» պետական արգելոցում օգոստոսի 12-ին բռնկված հրդեհը մտահոգել է մեր հայրենակիցներին: Կան օգնության բազմաթիվ առաջարկներ: ՀՀ բնապահպանության նախարարությունը շնորհակալություն է հայտնում բոլորին սրտացավության և օժանդակության պատրաստակամության համար և հայտնում է, որ «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպության անվամբ բացվել են հատուկ հաշվեհամարներ, որոնցում կուտակված միջոցները կուղղորդվեն բացառապես պետական արգելոցի հակահրդեհային կարողությունների հզորացմանը և այլ կարիքներին: Համապատասխան միջոցառումների իրականացման և հատուկ հաշվեհամարներին կուտակված միջոցների տնօրինման նպատակով նախատեսվում է ստեղծել «Խոսրովի անտառ» հասարակական խորհուրդ՝

կազմված փորձագետներից, հասարակության վստահությունը վայելող անհատներից, ինչպես նաև՝ նվիրատուների ներկայացուցիչներից: Խորհուրդը կվերահսկի հավաքագրված միջոցների օգտագործումը և պարբերական հաշվետվությամբ հանրությանը կտեղեկացնի այդ մասին: Ստորև ներկայացվում է հատուկ հաշիվների ռեկվիզիտները. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն ՀՀ Արարատի մարզ, ք. Վեդի, Կասյան 79:

- ՀՎՀՀ 04108656
- «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
- ՀՀ դրամ - հ/հ 220129690305000
- ԱՄՆ դոլար - հ/հ 220415140015001
- Ռուսական ռուբլի - հ/հ 220129690016958
- Եվրո - հ/հ 220415140049002

36,24 մլն. դրամ շրջակա միջավայրին հասցված վնաս



ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից 14.08.-18.08.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված ստուգումների, շրջայցերի, տեսչության վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 2,56 մլն. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 28 որոշում և հաշվարկվել 36,24 մլն. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մասնավորապես՝

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 7 որոշում 410,0 հազ. դրամի և հաշվարկվել է 35,63 մլն. դրամի շրջակա միջավայրին պատճառած վնաս, որից՝

Անտառների և կենսաբազմազանության վերահսկողության բաժնի կողմից «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Իջևանի անտառտնտեսություն» մասնաճյուղում իրականացված վերահսկողության արդյունքում հայտնաբերված ապօրինի հատված 916 ծառի համար հաշվարկվել է 35018,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Լոռու տարածքային բաժինը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Տաշիրի անտառտնտեսություն» մ/ճ-ի կողմից կազմված անտառխախտման արձանագրությունների հիման վրա /ապօրինի հատվել է 6 ծառ/ կայացվել է 100,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 2 որոշում և հաշվարկվել է 277,5 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Լոռու տարածքային բաժինը ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնից ստացված արձանագրությունների հիման վրա /2 իրավախախտ ապօրինի հավաքել են ՀՀ Բույսերի կարմիր գրքում գրանցված 27 ջրաշուշան/ կայացրել է 160,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 2 որոշում: Լոռու տարածքային բաժինը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսություն» մ/ճ-ի կողմից կազմված անտառխախտման արձանագ-

րության հիման վրա /ապօրինի հատվել է 2 ծառ/ կայացրել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկվել է 129,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշի տարածքային բաժնի կողմից հայտնաբերված ապօրինի ծառահատման /հատվել է 1 ծառ/ 1 դեպքի համար կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի մեկ որոշում և հաշվարկվել է 149,88 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Կոտայքի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ծառահատման 1 դեպք: Իրավախախտը ենթարկվել է 50,0 հազ. դրամի չափով վարչական տուգանքի և հաշվարկվել է 60,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ռեժիմի խախտման համար

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 150,0 հազ. դրամի և հաշվարկվել է 15,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս, որն է՝

Գեղարքունիքի տարածքային բաժինը «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի կազմած արձանագրության հիման վրա մեկ ֆիզիկական անձի նկատմամբ կայացրել է 150,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկվել է 15,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Փայտանյութի ապօրինի տեղափոխում

Կազմվել է վարչական տուգանքի 20 որոշում՝ 2000,0 հազ. դրամի և հաշվարկվել է 592,6 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝

Լոռու տարածքային բաժինը ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնից ստացված արձանագրության հիման վրա մեկ իրավախախտի նկատմամբ հաշվարկվել է 3.6 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Արարատի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված վառելափայտի ապօրինի տեղափոխման դեպքի համար կայացվել է 100,0 հազ. դրամի 1 որոշում և հաշվարկվել է 36.0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Կոտայքի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված վառելափայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքի համար կայացվել է 100.0 հազ. դրամի 1 որոշում և հաշվարկվել է 90,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշի տարածքային բաժինը ՀՀ ոստիկանության բաժնից ստացված արձանագրությունների հիման վրա 18 իրավախախտի նկատմամբ կայացրել է 1800,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 18 որոշում և հաշվարկվել է 463,0 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Ընդհանուր առմամբ ԲՊՏ կիրառված նախկին պատժամիջոցներից նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե՝ է մուտքագրվել 1,1 մլն. դրամ:



Գոշ լճի բնականոն վիճակը հիմնովին վերականգնված է նախարարության աջակուրջ հսկողությամբ

Այս տարվա ապրիլ ամսին սոցիալական ցանցերով ահագանգ էր տարածվել, որ Գոշ լճի ափամերձ հատվածում առանց համապատասխան թույլտվության մաքրման աշխատանքներ են կատարվում: ՀՀ բնապահպանության նախարարությունն անմիջապես արձագանքեց հրապարակումներին և միջոցներ ձեռնարկեց ապօրինի աշխատանքները դադարեցնելու ուղղությամբ: Ահագանգի հիմքերով իրականացված գործողությունների արդյունքում տարածքի վարձակալ «Վենդոռ» ՍՊԸ-ի իրականացրած աշխատանքները դադարեցվել էին, գնահատվել էր կատարված աշխատանքի ծավալը և դրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Ծառայողական քննության արդյունքում նկատողություն էր հայտարարվել «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան տեղամասի անտառապետին, որը տեղեկացված պետք է լիներ ընկերության կողմից լիճը տիղմից մաքրելու աշխատանքների մեկնարկի մասին: Վարչական պատասխանատվության էր ենթարկվել «Վենդոռ» ընկերությունը՝ առանց բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության լճի տարածքում աշխատանքներ նախաձեռնելու համար: Բնապահպանական խնդիրներով մտահոգ քաղաքացիները հիմնահարցը բարձրացրել էին նաև ապրիլի 15-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում անցկացվող էկոտուրիզմի խնդիրներին նվիրված համաժողովի ժամանակ, որտեղ նախարար Արծվիկ Մինասյանի և ակտիվիստների միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել ՀՀ բնապահպանության նախարար-

ությունում խնդրի առնչությամբ հանդիպումներ կազմակերպելու շուրջ: Վերջիններիս հետ հանդիպման ժամանակ նախարարը հայտնել էր, որ անձրևների դադարից մի քանի օր անց հնարավոր կլինի սկսել և կարճ ժամանակահատվածում ավարտել լճի հարակից հատվածների մաքրման աշխատանքները: Տեղեկացվել էր նաև, որ ափամերձ տարածքները տիղմից մաքրման և բարեկարգման բոլոր աշխատանքներն իրականացնելու են «Դիլիջան» ազգային պարկի մասնագետները՝ «Վենդոռ» ընկերության միջոցների հաշվին, որպեսզի մասնագիտական մոտեցմամբ նվազագույնի հասցվի ազդեցությունը լճի էկոհամակարգի վրա: Կովկասի բնության հիմնադրամի /CNF-ի/ ազգային համակարգող Արման Վերմիշյանն էլ ներկայացրել էր իր դիտարկումները, ըստ որոնց՝ լճի էկոհամակարգին էական վնաս չի հասցվել, ինչի մասին վկայում է լճի ափամերձ բուսատեսակների բնականոն աճը: Հուլիս ամսին, անձրևների դադարից 3 օր անց, սկսվել են Գոշ լճի հարակից հատվածների մաքրման աշխատանքները: Ներկա պահին դրանք ավարտվել են և լիճը բերվել է իր նախկին տեսքին: Աշխատանքների ողջ ընթացքը վերահսկել է ՀՀ բնապահպանության նախարարի հանձնարարությամբ ձևավորված մասնագիտական աշխատանքային խումբը: «Դիլիջան» ազգային պարկի աշխատակիցները համապետական շաբաթօրյակի շրջանակներում վերոհիշյալ տարածքներում իրականացրել են նաև աղբից մաքրման աշխատանքներ:

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրը գիտնականների եւ զբոսաշրջային կառույցների ուշադրության առարկա

Կոտայքի մարզի հյուսիս-արևմտյան հատվածում է գտնվում «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրը, որը սահմանակից է Լոռու և Արագածոտնի մարզերին: Արգելավայրը տարածվում է Մարմարիկ գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանի (427կմ) տարածքի սահմաններում, Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների, համապատասխանաբար, հարավահայաց և հյուսիսահայաց լանջերին: Այն կազմավորվել է ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1063-Ն որոշման համաձայն: Տարածքը կազմում է 5202,86 հա: Արգելավայրի ստեղծման նպատակն է պահպանել Մարմարիկ գետի վերին ջրհավաք ավազանը, ինչպես նաև՝ տարածքում գտնվող բնական աղբյուրները, լճակները, ֆլորան և ֆաունան: Հարկ է նշել, որ ԽՍՀՄ ժամակաշրջանում այստեղ գոյություն է ունեցել «Հանքավանի հիդրոլոգիական» պետական արգելոցը, որը ստեղծվել է 1981 թվականին և լուծարվել 2006 թվականին՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով: Արգելավայրի կազմավորման պահից ի վեր պահպանությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը: Տարիներ շարունակ Արգելավայրի գիտական ուսումնասիրությունները իրականացնում է Կազմակերպության գիտության բաժինը: Հիմնական ուսումնասիրման օբյեկտը ֆլորան և ֆաունան է, որը պատկերացում է տալիս Արգելավայրի ընդհանուր էկոհամակարգի, ինչպես նաև՝ էկոլոգիական վիճակի մասին: Այստեղ լավ է ուսումնասիրված թե՛ կենդանական, և թե՛ բուսական աշխարհը, ուսումնասիրված է նաև կլիմայական ասպեկտը՝ լանդշաֆտը, կլիմայական գոտիականությունը: Կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ Մարմարիկի հովտում լավ արտահայտված են լեռնային տափաստանների, լեռնային անտառների, մերձալպյան և ալպյան լանդշաֆտները: Մարմարիկի հովտում լեռնատափաստանային լանդշաֆտները լավ արտահայտված են ձախափնյա լանջերում, աջափնյա լանջերը հիմնականում ծառապատ են: Արգելավայրի անտառային գոտին զբաղեցնում է շուրջ 7,5 հա տարածք, որը ձգվում է Մարմարիկ գետի հունից մինչև 2300 մ բարձրությունները՝ սարն ի վեր: Անտառային գոտում հանդիպող ծառափատեսակներն են՝ անտառային խնձորենին, անտառային տանձենին, կեչին, արոսենին, հացենին, իլենին, սզնին և այլն: Սուբալպյան (ներառյալ նաև բարձրտեղերը) մինչև 2600-2700 մ բարձրությունները և դրանից

ավելի բարձր տարածված է հիմնականում ալպյան բուսականությունը: Գիտական ուսումնասիրությունների արդյունքում՝ 2800 մ բարձրության վրա հայտնաբերվել են Կովկասյան մրտավարդի բուսատեսակներ (Rhododendron caucasicum Pall.), Արևմտյան Անդրկովկասի սուբալպյան գոտու խոնավ շրջաններին բնորոշ ներկայացուցիչներ: Արգելավայրի ֆլորայի ավելի քան 50% (շուրջ 52 տեսակ) առաջավոր ասիական տարրեր են, կովկասյան տարրերը կազմում են 19 տեսակ՝ ֆլորայի շուրջ 18%: Փամբակի լեռնաշղթայի ալպիական գոտու ծաղկավոր բույսերի ֆլորան կազմված է 103 տեսակից, որոնք պատկանում են 28 ընտանիքների և 74 ցեղերի: Փամբակի լեռնաշղթայի կենտրոնական մասը համեմատաբար լայն է ու բարձրադիր: Միջին բարձրությունը մոտ 2800 մ է, իսկ առանձին գագաթները՝ Մայնելա, Թեժլեռ և այլն, անցնում են 3000 մ-ից: Արգելավայրում կենդանական աշխարհը ներկայանում է ՀՀ անտառային գոտում հանդիպող կաթնասուններով՝ գորշ արջ, աղվես, գայլ: Արգելավայրն ունի տուրիզմի զարգացման մեծ ներուժ: Այս ուղղությամբ Կազմակերպության տնօրինությունը իրականացնում է լուրջ աշխատանքներ, մասնավորապես՝ գիտական գործուղումների ժամանակ ուսումնասիրվում են տուրիստական առավել հարմար և գրավիչ երթուղիները, դիտարկվում են բարենպաստ վայրերը՝ գիշերակացի պայմաններ ստեղծելու նպատակով՝ իհարկ» վայրի բնությունը չվնասելու պայմանով, ինչը որ հանդիսանում է էքստրեմալ տուրիզմի զարգացման նախադրյալ: Պարբերաբար իրականացվում են Արգելավայրի վերաբերյալ տեղեկատվական աշխատանքներ, հրապարակվում են տեղեկատվական նյութեր: Իսկ ուսումնա-ճանաչողական և ուսումնա-արտադրական պրակտիկաները, որը իրականացվում են ԵՊՀ-ի և ՀԱԱՀ-ի 1-4-րդ կուրսի ուսանողների, ինչպես նաև տարբեր կրթահամալիրների՝ «Մխիթար Սեբաստացի», «Շահամիր Շահամիրյան», «Փոքրիկ Իշխան», «Խելացիների տուն» ուսումնական կենտրոնի հետ, արդեն ավանդական են: Կատարված ուսումնասիրությունների արդյունքները հավաքագրվել են, կազմվել գիտական հոդվածներ, որոնք հրատարակվել են տեղական և արտասահմանյան գիտական տարբեր հանդեսներում: Գիտական ուսումնասիրություններում մեծ ավանդ ունեն կենսաբանական գիտությունների դոկտոր Վ. Ոսկանյանը և Կենսաբանական գիտությունների թեկնածու Մ. Քալաշյանը:

Նյութը պատրաստեց Արթուր Խալաթյանը